մոգումը ծառայեցնել նրանց ընդհանուրի օգտին։ Եւ այդ յոյսերը կը պսակվին այն ժամանակ, երբ կատարեալ համերաշխութիւն կը լինի, հայ-լուսաւորչականի, հայ-կաթօլիկի, հայ-բողոքականի և հայ մահմետականի մէջ։

Գ. Բ.

ՆԱՄԱԿ ԱՂՆԱԽԻՑ

Դեկտեմբերի 3-ին

Աղնախից 30 վերստ հեռաւորութեամբ գտնվում է Վէլիսցիխէ գիւղը, որը իր մեծութեամբ և շինութիւններով ամբողջ Կախէթի գիւղերի մէջ առաջինը կարող է համարվել։ Վէլիսցիխեցիները ամէն կերպ աշխատում են իրանց գիւղի բարեկարգութեան մասին. առաջվայ նեղ և ծուռ փողոցները լայնացան, ուղղվեցան և սալայատակվեցան, փողոցներում լապտերներ տընկվեցան, խանութները շատացան և այլն։ Մէկ խօսքով սրան համարձակ կարելի է անուանել գիւղաքաղաք։

Որքան որ գիւղացիները աշխատում են իրանց գիւղի բարեկարգութեան համար, այնքան չեն աշխատում ուսումնարանի համար։ Զարմանալի բան է թէ ինչու. այնտեղի բնակիչները, որոնց մեծ մասը հայեր են, մինչև այժմ ուշադրութիւն չեն դարձրել այդ ամենահարկաւոր բանի վրա։ Միթէ մինչև այժմ չեն հասկացել որ ամեն ազգ պարտաւոր է իր մայրենի լեզուն սովորելու։ Բայց մենք հակառակն ենք տեսնում ոչ թէ միայն Վէլիսցիխէում, այլ և Վրաստանի շատ հայաբնակ քաղաքներում, որոնց բնակիչները անտարբեր աչքով են նայում այդ լեզուի վրա և մինչև անգամ արհամարհում են նրան։ Թող վերջապէս հասկանան մեր հոգևոր հայրերը, որ նրանց վրա է դրած այդ սրբազան պարտաւորութիւնը և պէտք է հասկացնեն իրանց յանձնված ժողովրդին մայրենի լեզուի սովորելու անհրաժեշտութիւնը։ Սրանք քահանայութիւնը լոկ եկեղեցական ծիսակատարութիւն չը պէտք է հասկանան,—պէտք է իմանան որ իրանք հովիւ են կարգված, պէտք է հովուեն իրանց ժողովրդին և միշտ պէտք է մտածեն նրանց մտաւոր և բարոյական կրթութեան վրա։ Բայց տարաբաղդաբար մենք շատ քիչ ունենք այդպիսի քահանաներ. մինչև անգամ Վրաստանի մեր քահանաների մէջ կան այնպիսիներ, որոնք չեն իմանում իրանց մայրենի լեզուն. թող այս մասին մտածի մեր հոգևոր իշխանութիւնը։

Մեր խօսքը Վէլիսցիխէի մասին էր։ Վաղուց է այս գիւղի ուսումնարանի շինութիւնը կապալով էր տրված, բայց կապալառուները ստացած փողերն ուտելով՝ դադարեցրել էին շինութիւնը, բայց այժմ մենք ուրախութեամբ լսում ենք, որ շինութիւնը աւարտած է տեղիս գործակալ Սանխաննոս ա. քահ. Տէր-Սանխաննոսեանցի աշխատութեամբ։

Մեր մէջ որքան բազմաթիւ են անտարբերներ դէպի ազգային գործերը, այնքան սակաւաթիւ են ազգասէրները։ Մօտիկ ժամանակում Վէլիսցիխէում վախճանվեցաւ մէկը և թաղվեցաւ եկեղեցու գաւթում. սրա համար նրա բարեկամները ուսումնարանին ընծայեցին 300 րուբլ. մէկն էլ պարտաւորվել է ուսումնարանին ընծայելու տարեկան 100 րուբլ. Թող Աղնախի հայ կիտոսները օրինակ առնէին գոնէ իրանց դրացի վէլիսցիխեցիներից։ Աղնախեցիները ոչ իրանց քաղաքի վրա են ուշադրութիւն դարձնում և ոչ ուսումնարանի վրա։

Մօտ օրերումս պ. Բարխուդարեանցը այստեղից գնաց Վէլիսցիխէ գիւղը, ժողովեց տեղացիներին, խնդրեց հոգաբարձուներ ուսումնարանի համար և ժողովարարութիւն արեց յօգուտ ուսումնարանի, բայց շատ ենք ցաւում որ 300 ընտանիքից գոյացաւ ընդամենը 200 րուբլ, փոխանակ 2,000-ի, որ ամենահեշտ կերպով կարող էին տալ։ Բայց տարաբաղդաբար մեր հայերի մեծ մասը հարիւրներով կը մսխեն և կը վատնեն աննպատակ քէֆի և թղթախաղի մէջ և մի կոպէկ կը խնայեն ազգային գործերի համար։

Ինչ և իցէ յաջողութիւն ենք ցանկանում վէլիսցիխեցիներին ուսումնարանի վերաբերութեամբ և խնդրում ենք, որ ոչինչ չը խնայեն ուսումնարանի համար և ապահովեցնեն նրան։ Բայց ուսումնարանը չունի նստարաններ և ցանկանում ենք, որ նստարանները շուտով պատրաստվեն, որ գոնէ ուսումը սկսվի յունվարից և ազատեն տեղացի հայ մանուկներին վրաց քահանաների և տիրացուների ձեռքից, որոնց մօտ կրթվում են վրաց ոգով, նոյնպէս ազատեն և նրանց, որոնք ամբողջ օրերով թափառում են փողոցները և ամեն տեսակ անբարոյականութիւններ են սովորում։

Որովհետև ուսուցչի անունը չեմ տալիս և մի և նոյն ժամանակ ասում եմ, որ ուսումնարանը, իբրև նոր բացվելի, նիւթապէս ապահոված չէ, գուցէ ընթերցողն ասի, թէ ինչ կօգնի շինութիւնը և նստարանները, քանի որ գլխաւոր բանը թողած է, այն է ուսուցիչը։ Ճշմարիտ է, եթէ մի ուսուցիչ հրաւիրեն, նրան կը հարկաւորվի տարեկան 400—500 րուբլ ռոճիկ, բայց քանի որ այդ ուսումնարանը կարողութիւն չունի այդքան տալու, ուստի լաւ կը լինի եթէ այդ պաշտօնը յանձնեն Գէորգ քահ. Գէորգեանցին, որը իր ուսումը աւարտել է Ներսիսեան դպրոցում և նրան բաւականացնեն մի չնչին ռոճիկով։

Աւելորդ չեմ համարում յիշել այստեղ և այս, որ Վէլիսցիխէում կան երկու երիտասարդ քահանաներ, որոնք զրկված են հայերէն գրքերի և լրագիրների ընթերցանութիւնից։ Խորհուրդ եմ տալիս այդ քահանաներին, որ գոնէ իւրաքանչիւրը տայ տարեկան 5 րուբլ և ստանան հայ լրագիրներից մէկը, այսպիսով թէ իրանց և թէ վէլիսցիխեցիներին մեծ օգուտ կարող են տալ։

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք 20 րուբլ և 50 կոպէկ պ. Վիրաբեանից, Վարշավայից, պ. Քիւրքճեանի Անիի ֆոտոգրաֆիական ժողովածուի համար։ Խնդրում ենք պ. Քիւրքճեանին յանձն առնել ուղարկել այդ ժողովածուն ուր հարկն է, իսկ փողը և հասցէն պ. Քիւրքճեանը կարող է ստանալ խմբագրութեան մէջ։

«Մշակի» ընթերցողները տեսնում են, որ դեռ նոր տարին չը հասած, մեր լրագիրը, քանի մի օր է, տպվում է ամբողջութեամբ նոր տառերով։

Կրկին կարդացինք «Մեղուի» մէջ Գ. Զ-ի պատասխանը։ Ինչ է ուզում մեզանից պարոնը,—չը գիտենք։ Մենք գրեցինք մի ընդհանուր առաջնորդող յօդուած և նա այդ առիթով կպաւ մեզ։ Մենք կը հարցնէինք պարոնին, ինչպէս է եղել որ այն ժամանակ, երբ մենք գրում էինք «Մեղուի» մէջ թէ մեր, թէ Նիկոլէ ստորագրութեամբ և «Հայկական Աշխարհում» մեր սեփական ստորագրութեամբ, պ. Գ. Զ. էլ խօսք չէր գտնում մեր յօդուածները, մանաւանդ մեր թատրոնական րեցէնզիաները գովելու համար, իսկ այժմ յայտնվում է որ մենք այն ժամանակ այնքան հեռու էինք հայութենից, որքան ինքն Գ. Զ. այժմ հեռու է չինականութենից։ Ուրեմն նա կամ այն ժամանակ կեղծաւորութիւն էր անում, կամ այժմ։ Կամ գուցէ մի ժամանակ սաստիկ հաւանելով մեր յօդուածները, նա ինքն էլ այն ժամանակ հեռու էր հայութենից, ինքն էլ չինականութեան մօտ էր։ Իսկ կոպիտ, անտեղի, բազարային խօսքերին մենք գլուխ չունենք պատասխանելու։ Ինչ որ վերաբերվում է պ. Գ. Զ-ի ցանկութեանը բոլոր հայ գրողների հեղինակութիւնները իրան սեփականացնելու, և երևակայելու թէ ինքն քիչ է մնում դարագլուխ է կազմել հայոց կեանքի մէջ,—դա մի անմեղ մխիթարութիւն է որ մենք թողնում ենք նրան վայելելու։

Գտնվում են հայերի մէջ մարդիկ, որոնք ոչ թէ միայն իրանց նամակներում զարմացում են յայտնում որ այս կամ այն յօդուածը չէ տպվել, բայց իրանց թոյլ են տալիս մինչև անգամ հայհոյական նամակներ գրել մեզ, թէ ինչի չենք տպել այս կամ այն, գուցէ և ճշմարիտ գեղեցիկ յօդուածը։ Զարմանալի է, որքան միամիտ մարդիկ կան աշխարհիս երեսին. կարծում են թէ խմբագիրը ամեն բան կարող է տպել, ինչ որ կը ցանկանայ։

Մեզ գրում են Աղնախից որ այդտեղ ձմեռը այս տարի շատ շուտ սկսվեց։ Ամսիս սկզբում մի քանի օր շարունակ ձիւն էր գալիս, որ և ծածկեց գետինը կէս արշին բարձրութեամբ։ Կենսական մթերքները հետզհետէ թանգանում են։

Րօստով (Դօնի վրա) քաղաքից մեզ գրում են որ հանգուցեալ Ասմոլով, որ ծխախոտի յայտնի ֆաբրիկանտ էր, ինչպէս լսվում է, 3000 րուբլ է կտակել ֆաբրիկայի բանւորների համար։ Նոյն տեղից մեզ գրում են որ աւազակութիւնները շատ յաճախ են դարձել Րօստովում։ Այս օրերս անյայտ գողերը մօտ 10,000 րուբլ գումարի արծաթեղէն իրեղէններ են տարել Օտէրինի ժամագործների մագազինից։

Շնորհակալութեամբ ստացանք Մոսկվայից պ. Գր. Խալաթեանցից նրա ռուսերէն թարգմանած «Давидъ Сасунскій, армянскій народный эпосъ» (Դաւիթ Սասունցի, հայոց ազգային վէպ) բրօշիւրը, որ առաջ տպվեցաւ «Журналъ Министерст. Народн. просвѣщенія» ամսագրում։

Ով որ գրվել է «Մշակի» խմբագրատան մէջ անդամ «Բարեգործական» ընկերութեան և իր անդորրագիրը դեռ չէ ստացել, կարող է ստանալ

սկզբնական և բնական ճանապարհները, որոնց հետ վեր գնալու համար, գնացողին հարկ է, կամայ թէ ակամայ, երեսն անել դէպի Բարձր Հայաստանի հովիտները։ Այդ երկու գետերը, և միւս զոյգն էլ՝ Արաքս և Կուր, և Արարատ լեռները, կարող են կոչվել Հայաստանի աշխարհագրական առաջին յիշատակարանները, սեփական բազում և բազում ժողովրդներից ճանաչված։»

Եւ յետոյ իջնելով դէպի յունական հնագոյն մատենագրութիւնը, Հ. Ղևոնդ Ալիշան գտնում է Քսենոփոնէն և նոյն իսկ Հերոդոտէն աւելի հին պատմագրողների հատուածներում Հայաստանի տեղեկագրութեան և նրա տնտեսական աղբիւրների վրա հիմնաւոր տեղեկութիւններ։ Արիստագորաս, Միլետացի բռնաւորը, որ ապրում էր հասարակ թուականէն վեց դար առաջ, ցոյց էր տալիս, լակեդեմոնացոց Կլէօմենէս թագաւորին, Հայաստանի ոչխարային և եզնային ճոխութիւնը, մետաղական տախտակների վրա նշանակված։—Քանթոս Սարդիկեցին, դա էլ դարձեալ մեծ Ալեքսանդրէն առաջ, յիշում է Հայաստանի մի աղի լիճ, անշուշտ Վանինը, ուր ձկի միակ տեսակը տառեխն է, որից համանմանապէս մուտ գործեց յոյն լեզուի մէջ տարիխօս բառը, որ ընդհանրապէս նշանակում է աղուած ու չորացված ձուկ։—Դրանց ժամանակակիցը, Ապոլլոնիդէս, յիշատակում է այն կենդանական կամ ջրջրառ տարօրինակ կազմակերպութիւնը (որոշումը բնապատմողներին եմ թողնում), որոնք երևում են հայկական լեռների սառնոցների ծոցում, որոնց ինքը սկօլեկաս անունն է տալիս, Թէոփանոսն էլ օրճպաս, որոնք մատուցանում են, ըստ նոցա ասելուն, մի զովարար և հեշտալից ըմպելիք, և մինչև այսօր էլ տեղացիներից ճանաչվում ու կարծվում են մի տեսակ թափանցիկ որդ. ըստ հայոց՝ որդնուկ, ըստ թիւրքաց՝ գիւլալ։ Ճառախօսն յիշում է և այլ լաւագոյն յոյն նկարագրողներ և աշխարհագրողներ մեր երկրին, որոնք ապրում էին, Ստրաբոնից առաջ, գ. և բ. դարերում, նախ քան Քրիստոս, և Աղեքսանդրիայի ակադեմիայէն ուղարկված փութաջան հետախուզողները։ Վերջապէս երբ հռովմէական «արծիւները ու լէգէօնները թևեցին անցան Եփրատն և Արաքսի, Հայաստանն էլ աւելի լաւ ճանաչվեցաւ ու նկարագրվեցաւ»։ Թէոփանոս Պոնտացին, մի քանի հնումներից հայ ճանաչված, Պոմպէոսի բանակի հետ մտնում է Հայաստան, ինչպէս «ուսուցանում է խոր աշակերտն Ստրաբոն», և ամենամանր նկարագրութիւնն ինքն է անում, «թէև ոչ ամենաճիշդը»։ Առաջինը դա է որոշ գրում հայ երկրի իշխանապետական բաժանումները իբրև մեծ երկիրներ կամ նահանգներ, որոնցից համրում է մի քանիսը։ «Թւում է թէ ինքն էլ շատ բան ուսած է եղել իր վարժապետ և հայրենակից Տիրանիոնից, բարեկամ Կիկերոնի և հռչակաւոր քերական և գրագէտ, որն որ ինչպէս անունով նոյնպէս էլ արիւնով հայ՚է երևում։ Յիշում է նաև երկու աշխարհագրողների անուններ, Արշակ և Ափրոդիսիանոս, որոնց պարսիկ կամ հայ լինելը չի կարող որոշել և որոնց գործն անգամ յայտնի չէ։ Յետոյ գտնում է մի Մեթրոդորի անուն, որ անորոշ թշնամի է եղել հռովմայեցոց և բարեկամ Միհրդատի, ապա բարեկամ մեր «գոռոզ Տիգրանին», որի պատմութիւնը և թերևս գովասանութիւնը գրեց զանազան գրքերում, տարաբաղդաբար բոլորն էլ, իր աշխարհագրական գործերի հետ, որոնց համար վերակոչվեցաւ տեղեկագիր, կորած են։»

Պլինիոս ծերը, առաջին դարում Հայաստանում 120 նախարարութիւն գիտէ, որոնցէն ոմանք, հնումը, առանձին կառավարութիւններ կամ թագաւորութիւններ էին կազմում, բայց որոնց անունները, շատ բարբարոս գտնելով, չէ տալիս։ Պտղոմէոս, երկրորդ դարում, երեսուն նահանգ է գտնում երկու Հայաստաններում և 150 քաղաք և աւան։ Դրանից օգուտ է քաղում, հետևեալ դարում, Սոլինոս։ Չորրորդ դարում երևում է Աղէքսանդր բազմավէպը, հայերից Պապ կոչված, ժամանակակից իրենց ազգի պատմագրողներին, որոնք այն ժամանակ յունարէն էին գրում։ Սրա գրուածքից, որ համառօտ էր Պտղոմէոսի գործքեն, օգտվում է հայոց առաջին աշխարհագիրը, Մովսէս Խորենացին։ Այդ աշխարհագրութեան մասին յայտնի են Սէն-Մարտէնի և նրանից յետոյ Պատկանեանի կարծիքները, դոյն գրուածքը յետագոյն ժամանակների արդիւնք համարելով, յատկապէս Է. դարու, որի հեղինակը, նոյն Պատկանեանի ասելով, իբր թէ Անանիա Շիրակացին է։ «Ցանօթ է», ասում է Հ. Ղևոնդ, «թէ այդ ազգ աշխատութիւնների մէջ հեշտու մտնում են փոփոխումներ, ընդարձակումներ, ներմուծումներ, և մեր այս նոր տպագրութեան մէջ շատ են երևում այդպիսիք. որոնք իսկապէս երևում են նոյն Է. դարում եղած, մասամբ, թւում է ինձ, արաբական արշաւանքէն առաջ մեր երկրի վրա, որ պատահեցաւ մօտ 637—641 տարիներում. և այդ նրա համար եմ ասում, որ այդ դէպքը չի յիշվում այնտեղ, և ոչ էլ երկրի մայրաքաղաքի (Դուինի) առումը. և մասամբ էլ նոյն դարու վերջին կիսում, որին անսխալապէս ապացոյց են յառաջ բերված պատմական եղելութիւնները։ Բայց ով ճանաչում է հայկական գրականութեան ընթացքը և լեզուի յատկութիւնը, կարող չէ այդ գործի ծագումը հեշտութեամբ վերջացնել Ե դարէն, որ մեր գրականութեան ոսկեղենիկն է։ Արդ, ես ընդունում եմ թէ այդ աշխարհագրական գործը Մովսէս Խորենացունն է, միայն Է. դարում փոփոխված,—ումից, որոշապէս ասել չեմ կարող. գուցէ նոյն այն Շիրակունիից, միջումը գտնելով այնպիսի յաւելուածներ որոնք իր երկրի, Շիրակի և սահմանակից տեղերի իշխանների մասին են խօսում։» Այդ ձեռնմխութիւնը, բազմահմուտ Հօր ասելով, կարող էր անել նաև մի Մաթուսաղէմ եպիսկոպոս, Սիւնիքի միտրոպոլիտ, որ կառավարում էր 630—50 տարիներում, և որի անունով, արդէն շատ տարի կայ, էջմիածնի վանքի ձեռագրերի ցուցակում, յայտնվեցաւ Հայաստանի աշխարհագրական մի նկարագրութիւն, թէև նորագոյն ցուցակների մէջ էլ ամենևին նրա յիշատակութիւնը չը կայ։

Բիւզանդեան կայսրների ձեռքով մի կողմից, և Սասանեան պարսիկների ձեռքով միւսից, Հայաստան, Դ. Ե. և Զ. դարերում քաղաքական մեծամեծ փոփոխութիւնների ենթարկուեցաւ. արաբները առաջիններին յաջորդելով աւելի յարգեցին երկրի տեղագրական հին կարգը, այն որ ճշգրտութեամբ պահպանուեցաւ ազգային պատմիչներից, Դ. դարէն սկսեալ մինչև ԺԵ-ը, այնպէս ինչպէս որ իրենց հին աշխարհագիրն էր աւանդել։ Թէև մինչև ԺԲ դարը անպակաս են լինում ազգային նոյնպէս և բիւզանդական և արաբական պատմիչներ, բայց աշխարհագրողներ և յատկապէս մեր երկրը նկարագրողներ չը կան, եթէ ոչ այս վերջիններին, արաբների, մէջ միայն, որոնց մատենագրութիւնը մի հարուստ հանք է որ դեռ բաւական հետախուզված չէ։

Յիշվում է միայն Ժ դարու վերջում, Սեբաստիայի Ուխտանէս եպիսկոպոսը, որ, ազգային պատմութեան և կրօնական անցքերի մի համառօտութիւն գրելով, խոստանում է իր գրուածքի երրորդ մասում այն երկրի տեղագրական նկարագիրն անել, ուր բնակվում էին ծաթ կամ ծայթ ազգային աղանդաւորները, անուն անուն յիշելով նրանց գիւղերը, ամրոցները և բնակած տեղերը։ Նրա գրքի այդ մասը կորած է։ Գալով նրանց բնակած երկրին, եպիսկոպոսի թեմից հեռու լինելու չէր, Եփրատի արևմտեան ափի երկայնութեան վրա, Փոքր Ասիայում նոյն դժբաղդութիւնը պատահում է և Յովհ. Երզնկացու աշխարհագրական գրուածքին. նա գրում էր ԺԳ. դարու վերջում. ԺԴ-ի սկզբում Երզնկա քաղաքը ճանաչված էր միջին դարում իր համբաւաւոր բուքերամների առևտրով, որի համար վկայում է նաև Մարկո Փօլօ ասելով, «ուր գործվում է աշխարհիս ամենալաւ բուքերամը»։ (Այստեղ յաւելացնում է յայտնի հայրենասէրը, ցաւօք սրտի) «Թող ցաւի մեզ հետ բայց չը զարմանայ ընթերցողը մեր այս գրական կորուստների վրա, որոնք անհուն են. որովհետև մոլեկրօն հալածանքը և անմեկնելի չարամտութիւնը չեն դադարում դեռ այսօր էլ, այդ տարաբաղդ երկրում, գիտութիւնը և քաղաքակրթութիւնը նուիրական որ և է յիշատակարան ջնջելէն։»

(Կը շարունակվի)

խմբագրատանը ամեն օր մինչև 2 ժամ. իսկ նիստի օրը Արծրունու Թատրոնի կասսայում։

—

Ցարիցինի հայերից ստացած «Մշակի» 12 բաժանորդների համար 120 րուբլ. բաժանեցինք հետևեալ կերպով։ 1) Թավրիզի հայոց ընթերցարան, 2) Թէհրանի հայոց ընթերցարան, 3) Նախիջևան դպրոցի 2-րդ զուգընթաց դասատուն, 4) Թիֆլիսի երկրորդ կլասիկական գիմնազիայի 6-րդ դասատուն, 5) Ջաքաթալի հայոց հոգևոր դպրոց, 6) Քարվանսարայի հայոց հոգևոր դպրոց, 7) Քիլվարի հայոց ծխական դպրոց, 8) Ախալցխայի հայ-կաթօլիկ ուսումնարան, 9) Կուլփի հայոց ուսումնարան, 10) Բաքուի հայոց ծխական դպրոց, 11) Ս. Պետերբուրգի համքարական դպրոցի աշակերտներ և 12) Թիֆլիսի ռէալական դպրոցի հայ աշակերտների գրադարան։ Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը Ցարիցինի հայերին։

—

Այսօր ստացված «Русскій Курьеръ» լրագրի համարում կարդում ենք մի քաղուած «Indep. Belge» լրագրից, որից երևում է որ Կ. Պօլսի Ներսէս պատրիարքը, զիջանելով Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի թախանձանքին, վճռել է յետ առնել իր հրաժարականը։ Լրագիրը աւելացնում է որ այդ որոշումը երևի հաճելի չի լինի Բ. Դրանը, որովհետև հայոց ազգի սիրոյ այդ նոր ապացոյցը դէպի իր հովիւը, կը քաջալերէ նրան աւելի էլ եռանդոտ կերպով աջակցել եւրոպական դիպլօմատիային Թիւրքաց Հայաստանի համար խոստացված ռէֆօրմները պահանջելու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Ինչպէս յայտնի է Ռօշֆօր իր լրագրի մէջ մի քանի մեղադրանքներ էր տպել ֆրանսիական մինիստր-տեղապահ Բուստանի դէմ, որը և դատաստանական հալածանքի ենթարկեց Ռօշֆօրին։ Նորերումս քննվեցաւ դատաստանական այդ գործը և Ռօշֆօրին դատարանը արդարացրեց։ Գրեթէ բոլոր լրագիրները զարմանք են յայտնում դատաստանական գործի այդպիսի հետևանքի առիթով։ Հանրապետական չափաւոր լրագիրները նկատում են, որ դատարանի վճիռը քաջալերում է Ռօշֆօրի նման մարդկերանց բամբասանքներ և մեղադրանքներ բարձել զանազան գործիչների վրա և այդպիսով կառավարութեան դրութիւնը դժուարացնել։ „République Française“ լրագիրը նկատում է, որ իւրաքանչիւր ազգասէր, որ գըտնվում է դիպլօմատիական ծառայութեան մէջ պէտք է զգուշանայ Ֆրանսիայի շահերը եռանդով պաշտպանելուց, որովհետև դրա համար հայրենիքի մէջ նրան ոչ թէ միայն շնորհակալութիւն չեն յայտնի, այլ մինչև անգամ պաշտպանութիւն չի գտնի անիրաւացի մեղադրանքների դէմ։ Տունիսի հիւրանոցների մէջ Պելլանից հաւաքած բամբասանքներին երդվեալ դատաւորները աւելի մեծ նշանակութիւն են տալիս, քան թէ Վադդինգտոնի, Բարտելեմի Սէնտ-Իլէրի և Լեսեպսի ցուցմունքներին։ „République Française“ լրագրի կարծիքով, Ռօշֆօրին արդարացնող դատավճիռը մեղադրական չէ կարող լինել Բուստանի համար։ „Temps“ լրագիրը հերքում է այն կարծիքը, թէ դատարանը իր վճռով պախարակեց կառավարութեան քաղաքականութիւնը Տունիսի մէջ։ Արմատականների և անհաշտների լրագիրները այդպէս էին մեկնում դատարանի վճիռը։ Ռօշֆօրի լրագիրը ուրախութիւն է յայտնում դատավճռի առիթով և խոստանում է ամեն ժամանակ կառավարչական անձանց դիմակները հանել։ „Temps“ լրագրի կարծիքով, երդվեալ դատաւորները անկարող են գնահատել քաղաքական անցքերը և հարցերը։ Պատգամաւորների ժողովի արմատական կուսակցութեան անդամները վաղուց մեղադրանքներ կը բարձէին կառավարութեան վրա, եթէ նրանք կարողանային փաստեր առաջ բերել։ Բուստան այժմ ենթարկված կը լինէր պարլամենտական քննութեանը, եթէ Ռօշֆօրի պատմածները փոքր ի շատէ իրաւացի լինէին։ Գամբետտա մտադիր է վարձատրել Բուստանին նրա կրած վիրաւորանքի համար և այդ նպատակով Բուստանին դեսպան է նշանակելու Աթէնքի մէջ։

„Journal des Debats“ լրագրի մէջ տպված է մի յօդուած, որ պաշտպանում է Գամբետտայի բարեմիտ բուն ազգային քաղաքականութիւնը միապետական կուսակցութիւնների վերաբերութեամբ, որոնց ներկայացուցիչները ծառայութեան են ընդունվում և առանց արգելքների հանդիպելու բարձր և նշանաւոր պաշտօններ են ստանում։ Վերջին ժամանակներում շատ էին յարձակվում պատերազմական մինիստր Կամպենօնի վրա այն պատճառով, որ նա մարշալ Կանրոբէրին և մարկիզ Գալիֆեէին զինուորական բարձրագոյն խորհրդի անդամներ նշանակեց, իսկ գեներալ Մարիբէլին նշանակեց գլխաւոր շտաբի հրամանատար։ „Journal des Débats“ լրագրի կարծիքով այդ կարգադրութիւնները ընդհակառակ ապացուցանում են, որ հանրապետական կառավարութիւնը այլ ևս կուսակցական կառավարութիւն չէ և որ նա իրան այնքան հաստատ և ամուր է զգում, որ կարող է օգուտ քաղել մինչև անգամ իր նախկին հակառակորդների ծառայութիւններից։ „Journal des Débats“ լրագիրը յիշեցնում է նոյնպէս և այն իրողութիւնը, որ միապետական կոմս Շօդօրդի ստացաւ դեսպանի նշանաւոր պաշտօնը ռուսաց կառավարութեան մօտ։ Այդ կարգադրութիւնն էլ ապացուցանում է, որ Գամբետտա ընդարձակօրէն համբերում է իր մօտ ծառայողների անձնական համակրութիւնները և համոզմունքները և որ նա փնտռել է ընդունակ մարդիկ ընտրել բոլոր կուսակցութիւններից, մինչև անգամ եթէ նրանք հանրապետութեան թշնամիներ են։ Քանի որ մէկը համաձայնում է ծառայել հանրապետութեանը, դա նշանակում է, որ նա ճանաչում է կառավարչական այդ ձևը, իսկ ֆրանսիական կառավարութիւնը մեծ շահեր կունենայ, երբ նա իր կողմը կը քաշի այնպիսի տաղանդաւոր գործիչներին, ինչպէս մարշալ Կանրոբէր և կոմս Շօդօրդի։ Պատերազմական մինիստրը, որ գեն. երկրորդ կայսրութեան ժամանակ յայտնեց իր հանրապետական համոզմունքները, ընդունեց իր վրա պատասխանատուութիւնը այն բոլոր միապետականների համար, որոնք արդէն ծառայում են կամ պէտք է ծառայեն նրա բաժնի մէջ։ Նմանապէս և Գամբետտայի հեղինակութիւնը մի գրաւական է, որ նրա ստորադրեալ Ֆրանսիայի ներկայացուցիչները արտասահմանի մէջ եռանդով կը պաշտպանեն հանրապետութեան շահերը օտար պետութիւնների առաջ։ Լրագրի կարծիքով շատ իրաւացի կը լինէր, որ առաջ բերած օրինակների համեմատ Ալժիրիայի գլխաւոր-նահանգապետ նշանակվէր մի իշխան, որ թէ կայսրութեան և թէ հանրապետութեան ժամանակ Ֆրանսիայի ամենաընդունակ և ամենահաւատարիմ ծառայ է եղել։ Այդ ակնարկութիւնը Օմալի դուքսի մասին է։

Արմատական կուսակցութեան ժողովը Լանեսանի Կլօվիս Հիւգի առաջարկութեան համեմատ կայացրեց հետևեալ վճիռը. „Ի նկատի առնելով այն նշանաւոր մեղադրանքները, որոնք բարձվում են ֆրանսիական դիպլօմատիական գործակատարներից մի քանիսի վրա, պատգամաւորների ժողովը որոշում է մի մասնաժողով նշանակել դիպլօմատիական բոլոր գործակատարների գործողութիւնները արտասահմանում վերջին հինգ տարիների ընթացքում քննութեան ենթարկելու։ Սպասում էին, որ Լանեսան նոյն օրը կը ներկայացնէր պատգամաւորների ժողովին իր այդ առաջարկութիւնը, բայց այդ նրան չաջողվեցաւ։ Ժողովի նախագահ Բրիսօն ժամի $4^1/_2$ կէսին բաց արաւ նիստը և իսկոյն կարդաց Գամբետտայի հրամանը պատգամաւորների ժողովի արձակուրդի մասին, որ տևելու է մինչև յունվարի—10։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Այն լուրի առիթով իբր թէ իշխան Բիսմարկ մի հեռագիր է ուղարկել իտալական թագաւորին, որի մէջ նա ցանկութիւն է յայտնել տեսնել Բեռլինի մէջ իտալական թագաւորին, Nord. Alg. Zeit.“ լրագիրը նկատում է. Այդ լուրը սխալ է։ Դիպլօմատիական սովորութիւնները թոյլ չեն տալիս, որ մինիստրը գրէ ուղղակի օտարազգի թագաւորին։ Իշխան Բիսմարկի պատասխանը Մանչինիի պահանջած մեկնութիւններին ուղարկված էր գերմանական դեսպան Կէյդելի հասցէով, որ այդ պատասխանը բերանացի յայտնեց իտալական արտաքին գործերի մինիստրին։ Հումբերտ թագաւորի այցելութեան մասին Բեռլինի այդ պատասխանի մէջ ոչինչ չէ ասված։ Ֆրանսիական նախկին դեսպան կոմս Սեն Վալիէ յանձնեց կայսր Վիլհելմին իր հրաժարական թղթերը և այնուհետև այցելեց գերմանական կայսրուհուն։ Նոյն օրը պալատի մէջ նրան պատւելու համար մի հացկերոյթ տրվեցաւ։

Դեկտեմբերի 15-ին բայխստագի նիստի ժամանակ քննվեցաւ պատգամաւոր Հէնելի առաջարկութիւնը, որ պարլամենտական քննութիւն էր պահանջում այն անկանոնութիւնների մասին, որոնք կատարվում էին պարլամենտական վերջին ընտրութիւնների ժամանակ։ Պատգամաւոր Րիկկերտ խստութեամբ յարձակվեցաւ կառավարչական հաշւի վրա այդ ընտրութիւնների մասին և պախարակեց այն ճնշումը, որ գործվեցաւ ընտրողների ազատութեան վրա։ Կառավարչական այդ ճնշումը չափազանց զգալի էր Պրուսիայի և Սաքսօնիայի մէջ։ Մի և նոյն ժամանակ ճառախօսը եռանդով բողոքեց կառավարչական „Provinz. Zeit.“ լրագրի անիրաւացի յարձակմունքների վերաբերութեամբ ազատամիտների դէմ։ Այդ լրագիրը, ինչպէս յայտնի է, հրատարակվում է ներքին գործերի մինիստրի պատասխանատուութեամբ։ Չը նայելով այդ բոլոր ինտրիգաներին և այն բարձր անուանը, որով ծածկվում էին պահպանողականների ցոյցերը, ազգի կամքը բացարձակ արտայայտվեցաւ և ժողովուրդը բողոքեց կառավարութեան ճնշումների դէմ։ Մինիստր Պուտկամեր պատասխանեց, որ, թէպէտ կառավարութեան համար ցանկալի չէ ապօրինի ճնշում ընտրութիւնների վրա, բայց նա իրաւունք ունի իր պաշտօնեաներից օգնութեան սպասել։ Կառավարութիւնը շնորհակալութիւն է յայտնում իր պաշտօնեաներից նրանց, որոնք վերջին ընտրութիւնների ժամանակ գործում էին յօգուտ կառավարութեան և այդպիսով արժանացան կայսրի երախտագիտութեանը։ Այդ ընտրութիւնների ժամանակ կառավարութիւնը չափազանց դժուար դրութեան մէջ էր։ Ասում էին, թէ մինիստրութիւնը մտադիր է ճնշել խեղճերին, օգնել նշանաւոր կալուածատէրերին և հետևել նեղ քաղաքականութեանը։ Կառավարութիւնը ստիպված էր մաքառել, քանի որ նրա նախագիծը այդպէս աղաւաղված էր։ Րիխտեր ասաց, որ նա խորհուրդ չէ տալիս մինիստրներին ծածկել իրանց կայսրի անունով։ Երբ կընդունվի պատգամաւոր Հէնելի առաջարկութիւնը, ամենքի համար պարզ կը լինի, թէ կառավարութիւնը ինչպիսի վրդովեցուցիչ ճնշումն էր գործում ընտրութիւնների վրա։ Ժողովուրդը պէտք է ազատօրէն գործէ, հակառակ դէպքում բայխստագը նրա ներկայացուցիչ չի լինի։ Ճառախօսը ամենքի համար հաւասար իրաւունքներ է պահանջում։ Շտէօկկեր ասաց, թէ քանի որ ժողովրդին գրգռում են կառավարութեան դէմ, նա կը մաքառի այդպիսի ցոյցերի դէմ և կրօնի և բարոյականութեան անունով կաշխատի ժողովրդին հաշտեցնել կառավարութեան հետ։ Պատգամաւոր Վիրխօվ, պաշտպանելով Հէնելի առաջարկութիւնը, ասաց, որ ընտրութիւնների ժամանակ կառավարութիւնը ընդունեց անամօթ խարեբաների օգնութիւնը։ Ճառախօսը առաջարկեց Պուտկամերին հրաժարվել այդպիսի ամօթալի դաշնակիցներից։ Վիրխօվի ճառը տպաւորութիւն գործեց։ Պատգամաւոր Բենիգսեն հաւանութիւն տուեց Հէնելի առաջարկութեանը ազգային-ազատամիտների կողմից և աւելացրեց, որ վերջին ընտրութիւնների ժամանակ չափազանց շատ ապօրինի գործեր կատարվեցան։ Պահպանողական անձինք յարձակվում էին ոչ թէ սկզբունքների, այլ անձնաւորութիւնների վրա։ Ճառախօսը ստոյգ ցաւում է, որ մինիստրը համարձակութիւն ունեցաւ ասել բայխստագի առաջ, որ ընտրութիւնների վրա ճնշում գործող պաշտօնեաները արժանացան ոչ թէ միայն կառավարութեան, այլ և կայսրի շնորհակալութեանը։ Հէնելի առաջարկութիւնը յանձնվեցաւ պարլամենտական մասնաժողովի քննութեանը։ Բայխստագի այդ նիստից յետոյ ամենքը հասան այն եզրակացութեան, թէ կառավարութիւնը կատարելապէս յաղթված է, որովհետև միայն Շտէօկկեր համարձակութիւն ունեցաւ նրան պաշտպանել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԱՐՇԱՎԱ, 15 դեկտեմբերի։ Սուրբ խաչի եկեղեցում պատարագի ժամանակ չարագործները վախեցրին հասարակութեանը „հրդեհ“ բացականչութիւնով։ Շփոթութեան ժամանակ սպանված են 29 մարդ, ծանր վիրաւորված են 30 և թեթև վիրաւորված են 100։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ Լրագիրները դեկտեմբերի 15-ից հաղորդում են մի յամառ լուր, որ պետական պօլիցիայից մի առանձին բաժին կը կազմվի Չերևինի իշխանութեան տակ։ Տագանրօգի մաքսատան մէջ գործած յանկարծակի քննութիւնը յայտնեց ահագին զեղծումներ։ Արտասահմանի ապրանքները թողված են առանց մաքսի կամ փոքր մաքսով։ Ենթադրված է բոլոր ծառայողներին դատաստանի ենթարկել։ Սպասում են, որ 1882 թւին դեղերի տակսան էժանացրած կը լինի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 91 ր., չորրորդ 90 ր. 25 կ., հինգերորդ 90 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 50 կ., երկրորդ 215 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր. 12 կ., ոսկի 7 ր. 83 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 25,28 պէնս, 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 25 պֆ.։ Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ